

[ ARMENIAN TEXT — TEXTE ARMÉNIEN ]

Պայմանագիր

Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնակցային  
Հանրապետության միջև կապիտալ ներդրումների խրախուսման ու  
փոխադարձ պաշտպանության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Գերմանիայի Դաշնակցային  
Հանրապետությունը,

կամենալով խորացնել երկու պետությունների տնտեսական  
համագործակցությունը,

ձգտելով բարենպաստ պայմաններ ստեղծել մի պետության  
քաղաքացիների կամ ընկերությունների կապիտալ ներդրումները մյուս  
պետության տարածքում իրականացնելու համար,

գիտակցելով, որ այդ կապիտալ ներդրումների իրականացման  
աջակցելն ո՞ր դրանց պայմանագրային պաշտպանությունը կարող են  
աշխուժացնել մասնավոր տնտեսական նախաձեռնությունն ու  
բազմապատկել երկու ժողովուրդների բարեկեցությունը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Պայմանագրի նպատակների համար՝

1/ «Կապիտալ ներդրումներ» հասկացությունն ընդգրկում է գույքային  
արժեքների բոլոր տեսակները, մասնավորապես՝  
ա/ շարժական և անշարժ իրերի սեփականությունը, ինչպես նաև մյուս  
գույքային իրավունքները, ինչպիսիք են հիպոթեքային իրավունքները և  
գրավադրման իրավունքները,

բ/ ընկերություններում մասնեւեւանային մասնակցության և  
մասնակցության մյուս ձևերի նկատմամբ իրավունքները,

գ/ անտեսական արժեքների ստեղծման համար օգտագործված  
դրամական միջոցների վերաբերյալ կամ տնտեսական արժեք ունեցող  
ծառայությունների վերաբերյալ պահանջների իրավունքը,

դ/ մտավոր սեփականության իրավունքները, ինչպիսիք են, մաս-  
նավորապես, հեղինակային իրավունքները, արտոնագրերը, տեխ-  
նոլոգիան, «Նոու-հաուս» և «գոտլիլը», գրանցված ֆիրմաների նմուշ-  
ները, անվանումները, արդյունաբերական նմուշներն ու մոդելները,  
ապրանքանիշերը, արտադրական գաղտնիքները,

ե/ իրավահավասարական կոնցեսիաները, ներառյալ բնական  
պաշարների հետախուզումն ու արդյունահանումը.

գույքային արժեքների ներդրման տեսակի փոփոխությունը չի  
շոշափում դրանց հատկությունը՝ որպես կապիտալ ներդրումի:

2/ «Եկամուտներ» տերմինը նշանակում է՝ կապիտալ ներդրման շնոր-  
հիվ որոշակի ժամանակամիջոցում ստացվող գումարներ, ինչպիսիք են

շահույթի մասը, դիվիդենդները, տոկոսները, լիցենզային կամ այլ վարձատրությունները:

3/ «Քաղաքացիներ» տերմինը նշանակում է՝

ա/ Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության նկատմամբ.

գերմանացիներ՝ Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության հիմնական օրենքին համապատասխան,

բ/ Հայաստանի Հանրապետության նկատմամբ.

Հայաստանի Հանրապետության Մահմանադրության և գործող օրենսդրության համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք:

4/ «Ընկերություններ» տերմինը նշանակում է՝

ա/ Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության նկատմամբ՝ ցանկացած իրավաբանական անձ կամ առևտրային ընկերություն, այլ ընկերություններ կամ միավորումներ՝ իրավաբանական անձի իրավունքով կամ առանց դրա, Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության տարածքում գտնվելու տեղով, անկախ այն բանից՝ դրանց գործունեությունն ուղղված է շահույթ ստանալուն, թե ոչ:

բ/ Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկություններ, որոնք ստեղծված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

#### Հոդված 2

1/ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը հնարավորությունների սահմաններում խրախուսողների կամ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների կապիտալ ներդրումները և այդ կապիտալ ներդրումները թույլատրելու է, իր օրենսդրությանը համապատասխան:

Նա յուրաքանչյուր դեպքում կապիտալ ներդրումների հետ վարվելու է ամենայն արդարամտությամբ:

2/ Պայմանավորվող կողմերից ոչ մեկն իր տարածքում կամայական կամ խտրական միջոցներ ձեռնարկելով ոչ մի կերպ չի սահմանափակելու մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների կապիտալ ներդրումների կառավարումն ու տնօրինումը, ինչպես նաև դրանց կիրառումն ու օգտագործումը:

#### Հոդված 3

1/ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների սեփականություն հանդիսացող կամ նրանց ազդեցության տակ գտնվող կապիտալ ներդրումների նկատմամբ ապահովում է ոչ պակաս քարենպաստ գործելակարգ /ռեժիմ/, քան սեփական քաղաքացիների և ընկերությունների կապիտալ ներդրումների կամ երրորդ

պետությունների քաղաքացիների և ընկերությունների կապիտալ ներդրումների նկատմամբ:

2/ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների նկատմամբ ապահովում է կապիտալ ներդրումների կապակցությամբ, նրանց գործունեությանը վերաբերող հարցում ոչ պակաս բարենպաստ գործելակարգ, քան սեփական քաղաքացիների և ընկերությունների կամ էլ երրորդ պետությունների քաղաքացիների և ընկերությունների նկատմամբ:

3/ Այդ գործելակարգը չի վերաբերում այն արտոնություններին, որոնք մի Պայմանավորվող կողմը տրամադրում է երրորդ պետությունների քաղաքացիներին կամ ընկերություններին՝ մաքսային կամ տնտեսական միությանը, ընդհանուր շուկային կամ ազատ առևտրի զգտուն նրանց անդամակցության կամ դրանց իետ գույակցության հիման վրա:

4/ Սույն հոդվածին համապատասխան տրամադրվող գործելակարգը չի վերաբերում այն արտոնություններին, որոնք մի Պայմանավորվող կողմը տրամադրում է երրորդ պետությունների քաղաքացիներին կամ ընկերություններին՝ կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրի կամ հարկային հարցերի վերաբերյալ այլ պայմանավորվածությունների հիման վրա:

#### Հոդված 4

1/ Մի Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների կապիտալ ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում օգտվում են լիակատար պաշտպանությունից և լիակատար անվտանգությունից:

2/ Մի Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումները բռնագրավման, պետականացման կամ ներգործությամբ բռնագրավմանը կամ պետականացմանը հսկասարեցված այլ միջոցառումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կարող են ենթարկվել միայն հասարակական շահերից ելնելով և փոխհատուցում վճարելով: Փոխհատուցումը պետք է համապատասխանի բռնագրավման, պետականացման՝ փաստորեն իրականացված կամ իրականացվելիք միջոցառումների կամ համանման իետևանքներով միջոցառումների պաշտոնական ծանուցմանը անմիջականորեն նախորդող պահին բռնագրավված կապիտալ ներդրման արժեքին: Փոխհատուցումը պետք է վճարվի անհապաղ, և մինչև դրանք վճարելու պահը փոխհատուցման գումարի վրա բանկային տոկոսներ են գալիս՝ գործող տոկոսային դրույքին համապատասխան, այն պետք է լինի գործնականորեն օգտագործելի և ազատ փոխադրելի: Բռնագրավման, ազգայնացման կամ իր բնույթով համանման միջոցառման իրականացման օրինակաբանությունը, ինչպես նաև փոխհատուցման չափը դատական կարգով քննության առնելու հնարավորությունը:

3/ Մի Պայմանավորվող կողմի քաղաքացիներին կամ ընկերություններին, որոնց կապիտալ ներդրումներին մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վնաս է հասցվել պատերազմի կամ այլ զինված ընդհարումների, հեղափոխության, արտակարգ դրության կամ խռովության հետևանքով, այս Պայմանավորվող կողմը պետք է վնասների հատուցման, հրաժարագումարների փոխհատուցման կամ այլ վարձահատուցումների նկատմամբ ոչ պակաս բարենպաստ գործելակարգ տրամադրի, քան իր սեփական քաղաքացիների կամ ընկերությունների նկատմամբ: Այդ վճարումները պետք է ազատ փոխադրելի լինեն:

4/ Մի Պայմանավորվող կողմի քաղաքացիները կամ ընկերությունները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում օգտվում են սույն հոդվածով կարգավորվող հարցերի նկատմամբ առավել բարենպաստ գործելակարգից:

#### Հոդված 5

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիներին կամ ընկերություններին երաշխավորում է կապիտալ ներդրումների հետ կապված վճարումների ազատ փոխադրում մասնավորապես՝

ա/ կապիտալի և կապիտալ ներդրումների ծավալը պահպանելու կամ ավելացնելու համար լրացուցիչ գումարների,

բ/ եկամուտների,

գ/ փոխառությունների մարման համար վճարվող գումարների,

դ/ կապիտալ ներդրումների լրիվ կամ մասնակի վերացման կամ օտարման դեպքում առաջացող հասույթի,

ե/ սույն Պայմանագրի 4-րդ հոդվածում նախատեսված փոխհատուցումների:

#### Հոդված 6

Եթե Պայմանավորվող կողմերից մեկը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կապիտալ ներդրման երաշխիքի հիման վրա գումարներ է վճարում իր քաղաքացիներին կամ ընկերություններին, ապա այդ մյուս Պայմանավորվող կողմը, առանց առաջին Պայմանավորվող կողմի՝ սույն Պայմանագրի 10-րդ հոդվածից բխող իրավունքները խախտելու /օրենքի կամ գործարքի հիման վրա/, ճանաչելու է այդ քաղաքացիների կամ ընկերությունների բոլոր իրավունքների ու պահանջների հանձնումը առաջին Պայմանավորվող կողմին: Բացի դրանից, մյուս Պայմանավորվող կողմը ճանաչում է առաջին Պայմանավորվող կողմի՝ այդ բոլոր իրավունքների կամ պահանջների /հանձնած իրավունքների/ տնօրինումը, որպիսիք առաջին Պայմանավորվող կողմը իրավասու է իրականացնելու մույն ծավալով, ինչ իրավանախորդը: Պահանջի հանձնված իրավունքների հիման վրա իրականացվող վճարների փոխանցման նկատմամբ

համապատասխանաբար գործում են սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունները, ինչպես նաև 5-րդ հոդվածը:

Հոդված 7

1/ 4-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ պարբերություններում, ինչպես նաև 5-րդ կամ 6-րդ հոդվածներում նշված վճարների փոխանցումները իրականացվում են անհապաղ՝ ըստ տվյալ պահին գործող փոխարժեքի:

2/ Այդ փոխարժեքը պետք է համապատասխանի հաշվարկային փոխարժեքից այն ընդհանուր համատեղված փոխարժեքին, որոնք միջազգային տարադրամային ֆոնդը հիմք կընդուներ համապատասխան տարադրամների միջազգային վճարումների վերահաշվարկման համար /special drawing rights/ վճարումների իրականացման պահին:

Հոդված 8

1/ Եթե մի Պայմանավորվող կողմի օրենսդրությունից կամ Պայմանավորվող կողմերի միջև սույն Պայմանագրի հետ միաժամանակ կամ հետագայում գոյացող միջազգային իրավական պարտավորություններից բխում է մի ընդհանուր կամ հատուկ դրույք, ըստ որի մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիները կամ ընկերությունները կապիտալ ներդրումները առավել ռաբենպաստ գործելակարգից պիտի օգտվեն, քան նախատեսվում է սույն Պայմանագրով, ապա այդպիսի դրույքը առավելություն կունենա սույն Պայմանագրի դրույքների նկատմամբ, քանի որ առավել բարենպաստ է:

2/ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը պահպանելու է ամեն մի այլ պարտավորություն, որը նա իր տարածքում ստանձնել է մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների կապիտալ ներդրումների նկատմամբ:

Հոդված 9

Սույն Պայմանագիրը վերաբերում է նաև այն կապիտալ ներդրումներին, որոնք իրականացրել են մի Պայմանավորվող կողմի քաղաքացիները կամ ընկերությունները մյուս Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, նրա տարածքում՝ դեռևս մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը:

Հոդված 10

1/ Սույն Պայմանագրի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ Պայմանավորվող կողմերի միջև ծագած տարաձայնությունները, ըստ հնարավորության, պետք է հարթվեն երկու Պայմանավորվող կողմերի կառավարությունների կողմից:

2/ Եթե այդ եղանակով տարածայնությունները չեն կարող հարթվել, ապա Պայմանավորվող կողմերից մեկի պահանջով այն հանձնվում է միջնորդական դատարանին:

3/ Միջնորդական դատարանը ստեղծվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար, ընդ որում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է միջնորդական դատարանի մեկ անդամ, և միջնորդական դատարանի երկու անդամները միասին պայմանավորվում են երրորդ պետության քաղաքացու թեկնածության համար, որին երկու Պայմանավորվող կողմերի կառավարությունները նշանակում են միջնորդական դատարանի նախագահ: Միջնորդական դատարանի անդամները պետք է նշանակվեն երկու ամսվա ընթացքում, իսկ միջնորդական դատարանի նախագահը՝ երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Պայմանավորվող կողմերից մեկը մյուս Պայմանավորվող կողմին կհայտնի տարակարծությունը՝ միջնորդական դատարանի վճռին հանձնելու իր մտադրության մասին:

4/ Եթե սույն հոդվածի 3-րդ պարբերությունում նշված ժամկետները չպահպանվեն, ապա փյլ պայմանավորվածության բացակայության դեպքում Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է անհրաժեշտ նշանակումներն իրականացնելու նպատակով դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախագահին:

Եթե նախագահը Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացիություն ունի, կամ մեկ ուրիշ պատճառ նրան խանգարում է իրականացնելու այդ գործունեությունը, ապա նշանակումները կկատարի փոխնախագահը: Եթե փոխնախագահը ևս Պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացիություն ունի կամ որևէ այլ պատճառով չի կարող նշանակումներ կատարել, ապա նշանակումները կկատարի միջազգային դատարանի՝ ըստ աստիճանի հաջորդ անդամը, որը Պայմանավորվող կողմերից ոչ մեկի քաղաքացիություն չունի:

5/ Միջնորդական դատարանն իր վճիռը կայացնում է ձայների մեծամասնությամբ: Նրա վճիռները պարտադիր օւժ ունեն: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կրում է միջնորդական դատարանի՝ իր նշանակած անդամի գործունեության, ինչպես նաև դատական գործընթացում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Միջնորդական դատարանի նախագահի գործունեության հետ կապված ծախսերը, ինչպես նաև մյուս ծախսերը Պայմանավորվող կողմերը կրում են հավասարապես: Միջնորդական դատարանը կարող է ծախսերի կարգավորման վերաբերյալ այլ որոշում ընդունել: Մնացած բոլոր հարցերում միջնորդական դատարանը իր աշխատակարգը որոշում է ինքնուրույն:

6/ Եթե երկու Պայմանավորվող կողմերը Կապիտալ ներդրումների վերաբերյալ պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև վեճերի կարգավորման 1965թ. մարտի 18-ի Կոնվենցիայի մասնակից պետություններ են հանդիսանում, ապա, տվյալ Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթները հաշվի առնելով, սույն հոդվածում հիշատակված միջնորդական

դատարանին դիմել հնարավոր չէ, եթե մի Պայմանավորվող կողմի քաղաքացու կամ ընկերության և մյուս Պայմանավորվող կողմի միջև պայմանավորվածությունն է ձեռք բերվել Կոնվենցիայի 25-րդ հոդվածին համապատասխան: Դրանով չի շոշափվում սույն հոդվածում հիշատակված միջնորդական դատարանին դիմելու հնարավորությունը՝ հիշյալ Կոնվենցիային /հոդված 27/ համապատասխան գործող միջնորդական դատարանի վճիռը չիարգելու դեպքում կամ օրենքի կամ գործարքի հիման վրա իրավունքը փոխանցելու դեպքում /սույն Պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն/:

Հոդված 11

1/ Մի Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացու կամ ընկերության միջև կապիտալ ներդրումների մաքուր տարակարծությունները, ըստ հնարավորին, կողմերը պետք է կարգավորեն փոխադարձ համաձայնությամբ:

2/ Էթե վեճը չի կարող կարգավորվել կողմերից մեկի՝ այդ մասին հայտարարելու պահից սկսած վեց ամսվա ընթացքում, ապա մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացու կամ ընկերության պահանջով այն հանձնվում է միջնորդական դատարանի վճռին: Եթե վիճաբանության կողմերը մեկ այլ համաձայնության չեն գալիս, ապա սույն Պայմանագրի 10-րդ հոդվածի 3-5-րդ պարբերությունները համապատասխանաբար պետք է կիրառել՝ այն պայմանով, որ միջնորդական դատարանի անդամների նշանակումը վիճաբանության կողմերն իրականացնեն սույն Պայմանագրի 10-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան, և որ կողմերից յուրաքանչյուրը սույն Պայմանագրի 10-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում նշված ժամկետը չպահպանելու և այլ պայմանավորվածության բացակայության դեպքում կարող է դիմել Փարիզում Միջազգային առևտրաարդյունաբերական պալատի միջնորդական դատարանի նախագահին՝ խնդրելով կատարել անհրաժեշտ նշանակումները: Միջնորդական դատարանի որոշումը ի կատար է ածվում ազգային օրենսդրությանը համապատասխան:

3/ Միջնորդական դատարանության կամ միջնորդական դատարանի որոշման կատարման ժամանակ վիճաբանությանը մասնակցող Պայմանավորվող կողմը որպես առարկություն չի կարող ներկայացնել այն փաստը, որ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացին կամ ընկերությունը կրած վնասի համար մասնակի կամ լրիվ փոխհատուցում է ստացել ապահովագրության հիմունքով:

4/ Եթե երկու Պայմանավորվող կողմերը նաև Կապիտալ ներդրումների վերաբերյալ պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև վեճերի կարգավորման 1965թ. մարտի 18-ի Կոնվենցիայի մասնակից պետություններ են դարձել, ապա վիճաբանության կողմերի միջև առկա տարաձայնությունները, ըստ սույն հոդվածի, քննության է առնում վերոհիշյալ Կոնվենցիայի շրջանակում գործող միջնորդական դատարանը, բացառությամբ այն

ղեկընթացի, որոնց նկատմամբ վիճարանության կողմերը այլ ընթացակարգի մասին են պայմանավորվում: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը սույնով իր համաձայնությունն է տալիս այդպիսի կարգին:

Հոդված 12

Սույն Պայմանագիրը գործում է անկախ այն դեպքում, քե երկու Պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեն արդյոք դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերություններ:

Հոդված 13

1/ Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերի վիճակնակումը կկատարվի հետագայում չափ սեղմ ժամկետում:

2/ Սույն Պայմանագիրը ուժի մեջ կմտնի վավերագրերի վիճակնակումից հետո մեկ ամիս անց: Այն գործելու է տասը տարի: Եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը սույն Պայմանագիրը գրավոր չենդյալ չհայտարարի դրա գործիղության ժամկետը լրանալուց տասներկու ամիս առաջ, ապա սույն Պայմանագիրը կերկարացվի անսահմանափակ ժամկետով:

3/ Մինչև սույն Պայմանագրի գործողության դադարեցման պահը իրականացված կապիտալ ներդրումների նկատմամբ 1-12-րդ հոդվածները դրույթները ուժի մեջ կմնան Պայմանագրի գործողության դադարեցման օրվանից հետագա քսան տարիների ընթացքում:

Հոդված 14

Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնակցության Հանրապետության միջև դադարում է գործել Գերմանիայի Դաշնակցության Հանրապետության և Խորհրդային Միության միջև 1989 թ. հունիսի 13-ի՝ Կապիտալ ներդրումների վիճակագրած պաշտպանության և խրախուսման մասին Պայմանագիրը:

Կնքված է Երևան քաղաքում 1995 թվականի դեկտեմբերի 21-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերենով և գերմաներենով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ՝

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝





ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կապիտալ ներդրումների խրախուսման ու փոխադարձ պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության միջև Պայմանագիրը ստորագրելիս ներքոստորագրյալ լիազորները նաև պայմանավորվեցին Պայմանագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող հետևյալ դրույթների շուրջ:

/1/ 1-ին հոդվածի համար

ա/ Կապիտալ ներդրումից ստացված շահույթը և այն կրկին ներդնելու դեպքում դրանից ստացված շահույթները օգտվում են կապիտալ ներդրման համար նախատեսված հավասար պաշտպանությունից:

բ/ Զաղաքացիությունը որոշելու այլ կարգից՝ անկախ՝ Պայմանավորվող կողմի քաղաքացի, մասնավորապես, համարվում է ամեն մի անձնավորություն, որն ունի համապատասխան Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների կողմից տրված ազգային անձնագիր:

/2/ 3-րդ հոդվածի համար

ա/ Սույն Պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության իմաստով որպես «գործունեություն» պետք է համարել, մասնավորապես, բայց ոչ բացառապես, կապիտալ ներդրման ղեկավարումն ու տնօրինումը, ինչպես նաև դրա կիրառումը և օգտագործումը: Սույն Պայմանագրի 3-րդ հոդվածի իմաստով որպես «պակաս բարենպաստ» գործելակարգ պետք է, մասնավորապես, դիտել տարբեր մոտեցումները հումքի և օժանդակ նյութերի, էներգիայի ու վառելիքի, ինչպես նաև արտադրության միջոցների ու արտադրական նյութերի բոլոր տեսակների ստացման սահմանափակման դեպքում, տարբեր մոտեցումները, երկրի ներսում և արտասահմանում արտադրանքի վաճառքի խոչընդոտման դեպքում, ինչպես նաև համանման հետևանքներով մյուս միջոցառումները: Ի շահ հասարակական անվտանգության և հասարակական կարգի՝ ժողովրդի առողջության պահպանման կամ բարոյականության ձեռնարկվող միջոցները, սույն Պայմանագրի 3-րդ հոդվածի իմաստով, «պակաս բարենպաստ» գործելակարգ չեն համարվում:

բ/ Սույն Պայմանագրի 3-րդ հոդվածի դրույթները Պայմանավորվող կողմին չեն պարտավորեցնում հարկային արտոնությունները, ազատումներն ու զեղչերը, որոնք տրամադրվում են, հարկային օրենսդրությանը համապատասխան, միայն իր տարածքում բնակվող կամ գտնվող ֆիզիկական անձանց կամ ընկերություններին, տարածելու մյուս Պայմանավորվող կողմի տարածքում

բնակվող կամ գտնվող ֆիզիկական անձանց կամ ընկերությունների վրա:

գ/ Պայմանավորվող կողմերը ազգային օրենսդրության շրջանակներում բարյացակամորեն կքննեն մի Պայմանավորվող կողմի այն անձանց մուտք գործելու և գտնվելու հայտերը, որոնք կապիտալի ներդրման կապակցությամբ մտադիր են գալ մյուս Պայմանավորվող կողմի տարածքը. տվյալ դրույքը տարածվում է նաև մի Պայմանավորվող կողմի աշխատավորների վրա, ովքեր կապիտալի ներդրման կապակցությամբ մտադիր են գալ մյուս Պայմանավորվող կողմի տարածքը. տվյալ դրույքը տարածվում է նաև մի Պայմանավորվող կողմի աշխատավորների վրա, որոնք կապիտալ ներդրման կապակցությամբ մտադիր են գալ մյուս Պայմանավորվող կողմի տարածքը և այնտեղ գտնվել աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով: Բարյացակամորեն կքննվեն նաև աշխատանքի թույլտվություն ստանալու հայտերը:

/4/ 4-րդ հոդվածի համար

Փոխհատուցում պահանջելու իրավունք գոյություն ունի նաև այն դեպքերում, եթե սխտությունն իր միջոցառումներով միջամտում է կապիտալ ներդրման առարկա հանդիսացող ձեռնարկմանը և դրանով իսկ էական տնտեսական վնաս հասցնում նրան:

/5/ 7-րդ հոդվածի համար

Փոխանցումը, սույն Պայմանագրի 7-րդ հոդվածի առաջին պարբերության իմաստով, «անհապաղ» կատարված է համարվում այն դեպքում, եթե կատարվում է այն ժամկետի սահմաններում, որը սովորաբար պահանջվում է փոխանցումն իրականացնելու ձևակերպումները պահպանելու համար: Ժամկետը սկսվում է համապատասխան հայտը ներկայացնելու պահից և ոչ մի պարագայում չի կարող գերազանցել երկու ամիս ժամկետը:

6/ Կապիտալ ներդրման կապակցությամբ՝ բեռների և մարդկանց փոխադրման ժամանակ Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի արգելի և չի խանգարի մյուս Պայմանավորվող կողմի տրանսպորտային ձեռնարկություններին՝ կատարելու տրանսպորտային գործողություններ և, անհրաժեշտության դեպքում, այդ փոխադրումները կատարելու թույլտվություն կտա:

Հիշյալ փոխադրումներին են վերաբերում՝  
ա/ սույն Պայմանագրի իմաստով՝ անմիջականորեն կապիտալ ներդրումների համար նախատեսված բեռների կամ Պայմանավորվող կողմերից մեկի կամ երրորդ պետության տարածքում ձրևե՝ ձեռնարկության կողմից կամ որևէ ձեռնարկության պատվերով ձեռք

բերվող բեռների փոխադրումները, որոնցում, սույն Պայմանագրի իմաստով, գույքային արժեքներ են ներդրված, ք/ այն անձանց փոխադրումները, ռվբեր, կապիտալի ներդրման կապակցությամբ, գործուղման մեջ են գտնվում:

Կնքված է Նրևան քաղաքում 1995 թվականի դեկտեմբերի 21-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերենով և գերմաներենով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՏ՝



ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ՝

